# Արձանագրություն N 2

**Երևան քաղաքի փողոցների մայթերի վերանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման «ԵՔ-ԲԸԾՁԲ-17/12» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի բացման նիստի**

ք. Երևան

13.12.2016թ.
Ժամը՝ 10:00

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Տ. Իգիթյան/ԳԱՊ/
Հանձնաժողովի անդամներ՝ Ե. Կարապետյան /գնահատող/, Ա. Կիրակոսյան /գնահատող/, Կ. Հարությունյան /բացող/, Ա. Հարությունյան /բացող/
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Համբարձումյան

## 1. Տեղեկություններ «ԵՔ-ԲԸԾՁԲ-17/12» ծածկագրով գնման ընթացակարգին հայտերի բացման մասին

(Տ. Իգիթյան)

Ընդունել ի գիտություն, որ գնման ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով հրավերով սահմանված օրը և ժամին՝ 2016 թվականի դեկտեմբերի 13-ին, ժամը 10:00-ին, Երևանի քաղաքապետարան, ք. Երևան Արգիշտի 1 հասցեում:

*Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:*

## 2. «ԵՔ-ԲԸԾՁԲ-17/12» ծածկագրով գնման ընթացակարգին հայտեր ներկայացրած մասնակիցների մասին

(Տ. Իգիթյան)

Գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

| h/h | Մասնակիցների անվանումը |
|---|---|
| 1 | «Սուֆետ» ՍՊԸ |
| 2 | «ՀԱԼԴԻ Քոնսալթ» ՍՊԸ |
| 3 | «Համաշիննախագիծ» ՍՊԸ |

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:*

## 3.Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկների մասին

(Տ. Իգիթյան)

3.1 Բաց ընթացակարգի մասնակիցների կողմից ներկայացվել են հետևյալ գնային առաջարկները.

| h/h | Երևան քաղաքի փողոցների մայթերի վերանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայություն | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | Մասնակցի անվանումը | Առաջարկած գինը | | | | |
| | | Ինքնարժեք | Շահույթ | ԱԱՀ | Ընդհանուր | Նախահաշվային արժեքը |
| 1 | «Սուֆետ» ՍՊԸ | 512273 | 51227 | 112700 | 676200 | 968 000 |
| 2 | «ՀԱԼԴԻ Քոնսալթ» ՍՊԸ | 620000 | 60000 | 136000 | 816000 | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 3 | «Համաշիննախագիծ» ՍՊԸ | 660000 | 70000 | - | 730000 | |

3.2 Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկներում չկան թվաբանական անճշտություններ:

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:*

**4.Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և սահմանված պահանջներին դրանց համապատասխանության մասին**

(Տ. Իգիթյան)

4.1 Մասնակիցների կողմից ներկայացված էլեկտրոնային փաթեթներում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը և դրանք համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին, բացառությամբ «ՀԱԼԴԻ Քոնսալթ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի.

-«ՀԱԼԴԻ Քոնսալթ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված տուժանքի մասին համաձայնության մեջ նշված է գլխավոր հաշվապահի անուն ազգանունը, սակայն տուժանքի մասին համաձայնության և վճարման պահանջագրում բացակայում է վերջինիս ստորագրությունը: Համաձայն ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված կարգի 45-րդ կետի՝ մասնակցի հայտը ենթակա է մերժման:

4.2 Գնահատող հանձնաժողովի կողմից մասնակիցների հայտերը էլեկտրոնային համակարգի միջոցով գնահատվել են հետևյալ կերպ.

| Մասնակցի անվանումը | Հայտի գնահատականը |
|---|---|
| «Սուֆետ» ՍՊԸ | Բավարար |
| «Համաշիննախագիծ» ՍՊԸ | Բավարար |
| «ՀԱԼԴԻ Քոնսալթ» ՍՊԸ | Անբավարար |

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:*

**5. Բաց ընթացակարգի 1-ին և հաջորդաբար տեղեր զբաղեցնող մասնակիցների մասին**

(Տ. Իգիթյան)

Գնահատող հանձնաժողովի որոշմամբ «ԵՔ-ԲԸԾՁԲ-17/12» ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցնող է ճանաչվել «Սուֆետ» ՍՊԸ-ն, որպես բավարար գնահատված նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից, 2-րդ տեղ՝ «Համաշիննախագիծ» ՍՊԸ-ն:

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:*

**6. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնելու և 1-ին տեղ զբաղեցրած մասնակցին ծանուցելու մասին**

(Տ. Իգիթյան)

6.1 Հիմք ընդունելով <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> ՀՀ կառավարության 168-Ն որոշմամբ հաստատված կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետը՝ գնման ընթացակարգի 1-ին և 2-րդ տեղեր զբաղեցրած մասնակիցների <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշին վերաբերող հրավերով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ 13.12.2016թ. հարցում ներկայացնել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

6.2 13.12.2016թ ծանուցել 1-ին տեղ զբաղեցրած մասնակցին հրավերով սահմանված ժամկետում (երեք աշխատանքային օր) ներկայացնել որակավորման չափանիշները

հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը: Հրավերով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովի կողմից կմերժվի առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթերը ներկայացնելու պահանջ կներկայացվի հաջորդ տեղը զբաղեցրած մասնակցին:

*Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:*

**7. Բաց ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին**

---

(Տ. Իգիթյան)

Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել << կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից ուղարկված եզրակացության և 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված որակավորման փոստաթղթերը ներկայացնելու օրվան հաջորդող աշխատանքային օրը ժամը 11:20-ին, բայց ոչ ուշ քան 19.12.2016թ. ժամը 14:40-ին, Երևանի քաղաքապետարան, Արգիշտիի 1, 3-րդ հարկ հասցեում:

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:*

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Տ. Իգիթյան

Անդամներ՝ ---------- Ա. Հարությունյան

---------- Ա. Կիրակոսյան

---------- Կ. Հարությունյան

---------- Ե. Կարապետյան

Քարտուղար՝ ---------- Ա. Համբարձումյան